



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՀՐԱՄԱՆ

N 2/60

30 12 2016

**ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐ ՆԵՐԿԱՅՄԱՑՆԵԼՈՒ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ (ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության կանոնադրության 12-րդ կետի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետը՝

Հրամայում եմ

1. Հաստատել.

1) Գործատուների կողմից աշխատանքային գրքույկները Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժիններ ներկայացնելու ժամանակացույցը (նախընտրելի ժամկետները)՝ համաձայն հավելված N 1-ի,

2) աշխատանքային գրքույկները Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժիններ ներկայացնելու գործընթացի համար պատասխանատու աշխատողների ցանկը՝ ըստ տարածքային բաժինների՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Սահմանել, որ.

1) սույն հրամանով հաստատված ժամանակացույցով սահմանված ժամկետները կարող են վերանայվել՝ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժնի և գործատուի միջև փոխհամաձայնեցված դեպքում,

2) գործատուն աշխատանքային գրքույկները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության ցանկացած տարածքային բաժին:



Ա.ՂԱԶԱՐՅԱՆ